ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արգամ Արամյանի՝ 2024թ. հուլիսի 4-ից 6-ը Մոսկվա գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արգամ Արամյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2024 թվականի հուլիսի 4-ից 6-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝

Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամ (այսուհետ՝ ԿԶԵՀ, Հիմնադրամ)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի ռազմավարական նիստին

5. Քննարկված թեմաները՝

ԿԶԵՀ անդամ պետությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպմանն ամփոփվել է Հիմնադրամի 2022-2026թթ. ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն), վերջինիս միջնաժամկետ գնահատման նպատակով կարևորվել են դրված նպատակներին և թիրախներին հասնելու ջանքերը, քննարկվել կիրառվող մեթոդների և գործիքների արդյունավետությունը, ինչպես նաև կատարվել համապատասխան ճշգրտումներ՝ ռազմավարության թիրախների և դրանց իրագործումն ապահովելու տեսանկյունից:

Միաժամանակ անդրադարձ է կատարվել գլոբալ մակրոտնտեսական իրավիճակի փոփոխություններին և դրանցով պայմանավորված երկրների

ռազմավարությունների վերանայումներին. դրական ազդեցություններից առանձնացվել է 2022թ.-ից ի վեր կապիտալի և մարդկանց մեծ ներհոսքը ՀՀ, ՏՏ ոլորտի ընկերությունների տեղաշարժը, ինչպես նաև ՀՀ-ից արտահանման հնարավորությունների ավելացումը: Մյուս կողմից, ներկայացվել են նաև այդ ազդեցությունների թողած բացասական հետևանքները:

Հիմնադրամի գործընկերներին մանրամասն ներկայացվել են ԿԶԵՀ-ի հետ ՀՀ ռազմավարության մեջ սահմանված 4 հիմնական ուղղություններով իրականացված և ընթացիկ աշխատանքները.

- մակրոտնտեսական և ֆինանսական կայունության պահպանում,
- կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումների համար աջակցության ստացում,
- աջակցություն բազային ենթակառուցվածքների արդիականացմանը,
- աջակցություն սոցիալական ոլորտների զարգացմանը:

Հայկական կողմը հանդես է եկել Հիմնադրամի և Հայաստանի հետ ռազմավարությունների իրականացման արդյունավետության բարձրացման մի շարք առաջարկներով, մասնավորապես՝

- Ռազմավարության մեջ «կլիմայական օրակարգի» ներառում,
- «Պետական ֆինանսների կառավարումը» որպես համագործակցության նոր առանձին ուղղության ամրագրում,
- միջնաժամկետ ֆինանսավորման շրջանակի ներառումը Ռազմավարության մեջ,
- ծրագրերի համաֆինանսավորման հնարավորություն,
- արդեն գործող ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման ավելացման հնարավորություն,
- ֆորս-մաժորի պայմաններում (հումանիտար նպատակներով) արագ արձագանքման դրամաշնորհային գործիքի ներդրում:

Նիստի ընթացքում մասնակիցները քննարկել են Հիմնադրամի ռազմավարության միջանկյալ գնահատման արդյունքները, ներկայացվել են այդ գնահատման արդյունքներով վերափոխումների մոտեցումները:

Միաժամանակ, հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Եվրասիական զարգացման բանկից (ԵԶԲ) Հիմնադրամի առանձնացմանը և որպես առանձին միջազգային կազմակերպության տրանսֆորմացիայի գործընթացին՝ հաշվի առնելով, որ վերջինիս կանոնադրական փաստաթղթերն արդեն իսկ ստորագրվել են մասնակից պետությունների կողմից և ներկայումս գտնվում են ուժի մեջ մտնելու փուլում:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ Հիմնադրամի և երկրների ռազմավարությունների միջնաժամկետ վերանայման արդյունքներն առաջիկայում կվերջնականացվեն և կտրամադրվեն նաև անդամ երկրներին:

Քանի որ նիստի շրջանակում անդրադարձ էր կատարվել նաև Հիմնադրամի՝ ԵԶԲ-ից առանձնացման գործընթացին՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում հստակեցնել Հիմնադրամի 1-ին նիստի անցկացման ժամկետները և նախաձեռնել նախապատրաստական աշխատանքներ:

Ստորագրությունը՝

10.07.2024թ.